հանձնված է տպագրության։ Ինստիտուտը հրատարակության է պատրաստում ակադեմիկոս ազգագրագետ-բանահավաք Գ. Սրվանձտյանի աշխատությունները երեք հատորով։ Սկսված է «Նյութեր և ուսումնասիրություններ հայ ազգագրության և բանահյուսության» մատենաշարի հրատարակությունը, որի առաջին չորս հատորները հանձնված են տպագրության։

Ինստիտուտը կազմակերպել է գիտական նստաշրջաններ՝ նվիրված ակադեմիկոս ազգագրագետների, բանագետների գործունեությանը։ Ինստիտուտի գիտաշխատողները հետաքրքիր զեկուցումներով հանդես են եկել Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Քիշինևում, Բաքվում և այլ քաղաքներում կազմակերպված հնագետների, ազգագրագետների, բանագետների ամենամյա նստաշրջաններին, կոնֆերանսներին ու սիմպոզիումներին։

Ինստիտուտի աշխատակիցները մասնակցում են նաև միջազգային կոնգրեսներին։ 1960 թ. Մոսկվայում կայացած արևելագետների միջազգային 25-րդ կոնգրեսում ինստիտուտի հին և միջնադարյան հնագիտության բաժնի վարիչ, պրոֆ. Կ. Ղաֆադարյանը հանդես եկավ «Դվինի պեղումները», իսկ ավագ գիտաշխատակից, պատմ. գիտ. թեկնածու Գ. Տիրացյանը՝ «Աքեմենյան տրադիցիաները հին Հայաստանում» զեկուցումներով, 1960 թ. օգոստոսին Ստոկհոլմում կայացած պատմաբանների միջազգային VII կոնգրեսում պրոֆ. Բ. Առաքելյանը զեկուցեց Հայաստանի նյութական մշակույթի մասին անտիկ շրջանում, որը մեծ ուշադրության արժանացավ։ 1964 թ. օգոստոսին Մոսկվայում կայացած ազգագրական և մարդաբանական գիտությունների VII կոնգրեսին մասնակցեցին մեր ինստիտուտի գիտաշխատողներ. գիտության վաստակավոր գործիչ Ս. Լիսիցյանը հանդես եկավ «Հայ ժողովրդական պարային և թատերական ներկայացումները», պատմական գիտությունների դոկտոր Է.Մ. Կարապետյանը՝ «Պատրոնիմիական հարաբերությունների վերապրուկները հայերի մեջ», պատմ. գիտ. թեկնածու Դ. Վարդումյանը՝ «Հայաստանի ազգագրական շրջանների բնութագրումը» ուշագրավ զեկուցումներով, որոնք հրատարակվեցին անգլերեն և ռուսերեն լեզուներով։ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը գիտական կապեր է հաստատել ժողովրդական դեմոկրատիայի և արտասահմանյան երկրների գիտնականների հետ։ Հայաստան են այցելել Պրագայի համալսարանի դոցենտ, խեթագետ Վ. Սոուչեկը, ամերիկացի հնագետ Ա. Ռոբերտը, 1960 թ.՝ պրոֆեսորներ Գյոտցեն (ԱՄՆ), Հյուլին (Անգլիա), Բրնբցիանուն (Ռումինիա), Վարշավայի գիտության և արվեստի պատմության ինստիտուտի գիտաշխատող, դոկտոր Մարիա Դեկան, բուլղարական ազգագրագետ Ա. Պրիմովսկին, որն զբաղվում է նյութական մշակույթի ուսումնասիրությամբ, ինչպես նաև հայ-բուլղարական մշակույթի փոխազդեցությունների հարցով, ամերիկյան հայտնի մարդաբան և հնագետ, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Հեների Ֆիլդը, որի նախաձեռնությամբ ԱՄՆ-ում անգլերեն թարգմանվում են Բ. Առաքելյանի «Գառնիի» աշխատության I և II պրակները, հնդիկ հնագետներ Լալը և Շարմանը, անգլիացի գիտնականներ Դավիթ Լանգն ու հնագետ Ջարլզ Բարնեյը։ Վերջինս հանդես է եկել Թուրքիայի տերիտորիայում եղած ուրարտական հուշարձանների ուսումնասիրության վերաբերյալ զեկուցումով, իսկ ամերիկյան հնագետ Ռեգարտ Կերտոնը ծանոթացրեց Իրանական Ադրբեջանի տերիտորիայում կատարած իր հնագիտական աշխատանքներին։

Կ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ

ՋՈՒՋԵՎԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ՎԱՂ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ջուջևանի դամբարանադաշտը պատկանում է «Արամի բլուր» կոչվող ժայռափակ բլրի գագաթին գտնվող կիկլոպյան ամրոց-բնակատեղիին, ուր 1929 թ. բնակարանաշինարարության ժամանակ հայտնաբերվել են շենգավիթյան տիպի վաղ բրոնզեդարյան կացարաններ։ Կիկլոպյան այդ ամրոցը, որը անմատչելի է հարավային կողմից, շրջափակված է բնական և արհեստական ժայռապարիսպներով։ Նրա հյուսիսային մասով՝ 400 մ հեռավորության վրա ձգվող հարթավայրում, տարածվում է վաղ միջնադարյան բնակավայրն ու գերեզմանոցն իր հնագույն ավերված վանքով։ Ամրոցի ժայռապատ հարավային գագաթը ավարտվում է կապույտ գրանիտե քարաժայռերով կտրուկ իջնող զառիթափ թեքությամբ, որի ստորոտով անցնում է ասֆալտապատ ճանապարհը, որը հատող դամբարանադաշտն իր լայնությամբ ձգվում է մոտ

200 մետր դեպի հարավ և ավարտվում «Շորվանի ձորով» հոսող գետակով։ Դամբարանադաշտը արևմուտքից-արևելք է ձգվում մոտ 800 մ տարածությամբ։ Նա ոչ միայն Նոյեմբերյանի շրջանում ամենախոշոր հնադարյան դամբարանադաշտն է, այլև ամենահետաքրքիրն է թաղման բազմազան ձևերով, որոնք վկայություն են նրա երեք հազարամյա հարատևության։

Բնակատեղիից հայտնաբերված քարե գործիքները ենթադրել են տալիս, որ այդ շրջանի բնակչությունը զբաղվել է երկրագործությամբ և մետաղամշակությամբ։ Այստեղ հայտնաբերվեց քարե շատ պարզ էլիպսաձև մի աղորիք, իսկ արևելյան բերդապարսպի մոտ՝ սանդ և կոտրված սանդակոթ (նկ. 7 և 8)։ Շրջանի Լճկաձոր և Արձիս գյուղերում ևս հայտնաբերվել են Է. Խանզադյանի բնութագրած ստորին հիմնական և վերին տրորիչ քարերից բաղկացած աղորիքներ ու սանդակոթեր, որոնք ընդհանուր նմանություն ունեն Շրեշ-բլուրի, Շենգավիթի և Մուխանաթ-թափայի պղնձեդարյան շրջանի քարե գործիքներին[1]։ Խոսելով նման քարե պարզ աղորիքների մասին, պրոֆ. Բ. Ն. Առաքելյանը նշում է, որ այդպիսի աղորիքներ գտնվել են Հայաստանի այն բնակավայրերում, որոնք գոյություն են ունեցել մ. թ. ա. IV—III հազարամյակում[2]։ 67 սմ երկարությամբ և 37 սմ լայնությամբ այդ աղորիքն ունի որոշ դոգավորություն, հավանաբար ծառայել է որպես հատիկահան անելու միջոց։

Անդրկովկասում և Հայաստանում հայտնաբերված նման աղորիքները Բ. Բ. Պիոտրովսկին բնութագրում է որպես Նեոլիթյան շրջանի III հազարամյակի հատիկամշակման քարե գործիք[3]։

Քարե սանդը (տախտակ № 1, նկ. 2), որն ունի 9 սմ խորություն և 13 սմ տրամագիծ, գտնվեց բնակատեղիի բերդապարսպից ոչ հեռու։ Նրանից 40 մ հեռավորության վրա, ձորաբերանին, փոսորակ տարածության վրա առատորեն դուրս էր գալիս մետաղական խարամ։ Նման սանդերը հնագիտության մեջ բնութագրված են որպես հանքամշակության նպատակով օգտագործվող քարե գործիքներ։

Դամբարանադաշտի վաղ բրոնզեդարյան հուշարձաններով տեղակայված № 3 դամբարանից հայտնաբերված պղնձյա մանյակը նույնպես ապացուցում է, որ ամրոցի բնակչությունը դեռևս IV—III հազարամյակից մշակելիս է եղել մետաղ։ Պատրաստման տեխնիկայով մանյակը պարզունակ է և տարբերվում է ավելի ուշ շրջանի նմուշներից։ Նման մանյակներ հայտնաբերվել են Ե. Լալայանի կողմից Շրեշ բլուրի ստորին շերտի պեղումների ժամանակ, քարե մուրճերի հետ միասին[4]։ Մանյակը մեծ հավանականությամբ մշակվել է տաք եղանակով։ Հայտնի է, որ դեռևս IV հազարամյակից մետաղի մշակման սառը և ապա III հազարամյակից՝ տաք եղանակները հայտնի էին Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերին։

Ջուլֆանի դամբարանադաշտի կենտրոնական մասում վաղ հայկական շրջանի թաղումների ստորին շերտում են տեղավորված վաղ բրոնզեդարյան հազվագյուտ թաղումները, որոնց շրջափակում են բրոնզեդարյան II հազարամյակի թաղումները և ապա շրջանաձև հաջորդում են բրոնզեդարյան թաղումները. այնուհետև որքան դամբարանադաշտը հեռանում է դեպի ծայրամասերը, թաղումները վերաբերում են ավելի ուշ՝ վաղ երկաթի, երկաթի և ապա բոլորովին ուշ ժամանակաշրջանների։

Դամբարանադաշտում աչքի ընկնող տեղ են գրավում շրջանակի և ձվածիր թաղումները։ Վերջիններս էլիպսաձև շարված կոպիտ քարեր են։ Այդպիսի դամբարանների երկարությունը հասնում է 3—4 մետրի, լայնությունը՝ 1,5—2 մ, իսկ խորությունը հասնում է մինչև 2,5 մետրի։ Նրանց մեջ հաճախ լինում են 1—2 կոպիտ քարեր։ Դամբարանում հանգուցյալի դիակը դրվել է ոչ կանոնավոր քառանկյան կամ բազմանկյան ձև հիշեցնող քարարկղի մեջ և ծածկվել է սալերով։ Թաղման նման ձևերը նույնպես Հայաստանում տարածված ձևերից են։

Իրենց չափերով ավելի փոքր են շուրջանակի թաղումները, որոնց տրամագիծը չի անցնում 1—1,5 մ, իսկ խորությունը՝ 1-ից 1,2 մ։ Սրանք գետնաթաղ անձև քարեր են, որոնց թիվը 5—8 քարից ավելի չէ։ Այդպիսի դամբարաններում դիակները թաղված են նստած վիճակում և չեն ծածկված սալերով։

Դամբարանադաշտի գերեզմանների տարածված ձևերից են նաև քարարկղաձև թաղումները։ Միջին և ավելի ուշ շրջանի բրոնզեդարյան այդ

---

1 Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967, էջ 37, աղյուսակ 3-րդ և 4-րդ։

2 Բ. Առաքելյան, Մեր նախնիների տեխնիկան, «Գիտ. և տեխնիկա», 1966, № 6, էջ 5։

3 Б. Б. Пиотровский, Основные этапы древнейшего земледелия в Армении, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 3—4։

4 Ե. Լալայան, Դամբարանների պեղումները խորհրդային Հայաստանում, Երևան, 1931։

1

2

3

4



5

6



7



8

դամբարաններում երկու կողմից իրար զուգահեռ դրված են երկու սալաքարեր, որոնց մեջ դիակները թաղված են դիակիզված կամ կուչ եկած ձևով և ծածկված են սալերով։ Նրանց երկարությունը հասնում է 1,2—1,6 մ։ Նման դամբարաններով հարուստ են Նոյեմբերյան գյուղի Հարսնաքարի և Աղաջանգիթի, Ղոշղոթան գյուղի «Խալաթի գոմատեղ» և Կողբի «Ղլջանց գլաշ» կոչվող հանդամասերի դամբարանադաշտերը։

Ավելի ուշ՝ երկաթի դարի ժամանակաշրջանի քարարկղային գերեզմանոցներում հանգուցյալները դրված են երեք կամ առանձին դեպքերում չորս կողմից շրջափակված, որոշ ձև տրված, բարակ քարասալերից քարարկղներում, որոնք ծածկված են սալերով։

Այդպիսի կանոնավոր քառանկյունի դամբարանների լայնությունը չի անցնում 40—60 սմ-ից, իսկ երկարությունը տատանվում է 70 սմ-ից 1 մետրի միջև։ Գրեթե նույն չափի խորություն ունեն այդ դամբարանները։

Դամբարանադաշտի կիկլոպյան բնակատեղիից հայտնաբերված Լենոլիթյան շրջանի խեցագործության բեկորների նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատրաստման որակով և նախշարվեստով դրանք նման են դամբարանադաշտում հայտնաբերված խեցեգործության նմուշներին։ Մյուս կողմից դամբարանադաշտի և բնակատեղիի խեցեգործական արտադրության արգասիքները նման են Հայաստանում տարածված կավանոթներին, որոնք առանձնահատուկ են իրենց սև փայլուն անգոբով և կարմիր աստառով։ Լայն բերանով, նեղ հատակով և շրջանաձև բռնակներով բնորոշ կավամանները ունեն զորշ, օխրագույն, կարմիր կամ վարդագույն աստառներ։

Նոյեմբերյանի շրջանի տարբեր վայրերում հայտնաբերված վաղ բրոնզեդարյան շրջանի խեցեգործական մշակույթի նմուշներից նկատելի է, որ նրանք ընդհանուր նմանություն ունեն Խրամի ավազանի III հազարամյակի խեցեղենի հետ[5]։

Ջուլֆանի «Միջին մատի» դամբարանադաշտի կենտրոնական մասի վաղ հայկական ժամանակաշրջանի դամբարանների ստորին շերտում հայտնաբերված հուշարձաններից իրենց զարդարվեստով ավելի ուշագրավ են միմյանց նման, երկվորյակ գավաթները (նկ. 1—3), որոնք հայտնաբերվեցին կից դամբարաններից։ Վերոհիշյալ երկու գավաթներն ունեն նեղ փոքրիկ հատակ, լայն բերան, զարդարված են ակոսային փոսիկներով և ուռուցիկ փակ նախշերով, որոնք վերջանում են գեղեցիկ պարույրներով։ Նրանք փոքր ինչ մեծ են Թրիլիսիի պատմական թանգարանում պահվող Մոխրաբլուրի երկու գավաթներից, թակայն պատրաստման իրենց որակով և արվեստով նման են նրանց։

Նրանցից առաջինը (նկ. 1) ունի շրջանաձև բռնակ, զորշ գույնի աստառ։ Նրա բարձրությունը 15 սմ է, բերանի լայնությունը՝ 12,5 սմ, հատակի լայնությունը 4 սմ է, իսկ փորի պարագիծը՝ 50 սմ։ Ներճկված նախշերով, կես սմ հաստություն ունեցող այդ գավաթի պատերն ունեն փոսիկներ և համակենտրոն շրջաններ։

Երկրորդը (նկ. 3) նույնպես ունի մուգ սև գույնի փայլ, զորշ սպիտակավուն աստառ, զարդարված է ակոսային փոսիկներով և ուռուցիկ ներճկված փակ նախշերով, որոնք ավարտվում են գեղեցիկ պարույրներով։ Ունի 16 սմ բարձրություն, բերանի լայնությունը հասնում է 11 սմ-ի, իսկ հատակինը՝ 3,5 սմ-ի։ Պատրաստման որակով և զարդարվեստով միանգամայն նման է առաջինին։ Ի տարբերություն առաջինի, կավանոթի շուրթի վրա երկու հակադիր կողմերում կան երկուական պտուկներ։ Գավաթի փորով ձգվող և այն երկու մասի բաժանող, խոր թեք գծերով զոտու վերևի և տակի մասով անցնող պարույրները պարփակվում են եռանկյունաձև նախշերի մեջ։

Դամբարանադաշտում կան նաև սև փայլով, անզարդ շրջանաձև բռնակներով կարմիր և նարնջագույն աստառ ունեցող խեցեղենի նմուշներ, որոնք նման են Գառնիի վաղ բրոնզեդարյան շերտի և Էլարից հայտնաբերված III հազարամյակի խեցեղենին։ Նրանց տարատեսակներից է մուգ սև անգորով ծածկված, անզարդ, շրջանաձև բռնակ ունեցող կարճավիզ գավաթը (նկ. 4)։ Նրա զորշագույն աստառի հաստությունը հասնում է 0,6 սմ-ի։ Գավաթը երկու հավասար մասերի է բաժանվում իրանի կենտրոնով անցնող թույլ գծիկներով արտահայտվող գոտիով։ Վերջինս իր մեծությամբ փոքր ինչ զիջում է նախորդ 2 գավաթներին։ Նրա բարձրությունը հասնում է 11 սմ-ի, բերանի լայնությունը 10 սմ է, իսկ հատակինը՝ 5,6 սմ։

Դամբարանադաշտում հայտնաբերվել են նաև վաղ բրոնզեդարյան, սև փայլ ունեցող երկրաչափական նախշերով, ծիրանագույն և վարդագույն աստառներով, մինչև 1,8 սմ հաստությամբ խեցեղեն մնացորդներ, նման Շենգավիթի և Շրեշ-բլուրի նմուշներին։ Հայտնաբերված բեկորները (նկ. 5 և 2) ունեն վարդագույն աստառ, մանր նուրբ կետանախշեր I գծային փորագրումներով մեանդրներ, եռանկյուններ և ռոմբաձև նախշեր. վերադիր նախ-

[5] Б. А. Куфтин, Материалы к археологии Колхиды, т. I, Тбилиси, 1949, էջ 19—21։

շերը ավարտվում են պարույրներով։ Քիչ չեն նաև երկրաչափական պարզ, միմյանց զուգահեռ կամ իրար հատող գծիկներով, սև փայլով սպիտակավուն հաստ աստառ ունեցող կարասների բեկորներ, որոնք հայտնաբերվել են ինչպես դամբարանադաշտից, այնպես էլ բնակատեղիից (նկ. 6)։ Այդ բեկորներին զուգահեռ հայտնաբերվում են նաև մինչև 1,8 սմ հաստությամբ ծիրանագույն, դեղնագույն, III հազարամյակի խեցեգործական մշակույթին վերաբերող, շրջանաձև բռնակներ ունեցող անզարդ խեցիների մնացորդներ (նկ. 6), որոնք նման են Էլարում, Կամոյում, Մուշում գտնվածներին[6]։ Նման մեկ կանթանի սև, փայլեցրած, անզարդ գավաթներ հայտնաբերվել են նաև Նախիջևանի Քյուլ-թափայում[7]։

Նոյեմբերյանի և Ալավերդու վաղ բրոնզեդարյան շրջանի խեցեղենին բնորոշ են կարմրավուն և դեղնավուն հիմնագույնով, գորշ ալիքաձև և ռոմբաձև գծերով նախշերը, ինչպես նաև թռչնակերպ պատկերները։ Դրանք նման են Շենգավիթի 4-րդ և Գյոյի-թեփեի «Կ» շերտում հայտնաբերված նմուշներին։ Վաղ բրոնզեդարյան թաղումների հատվածում հայտնաբերվել են քարե քանդակներ, որոնք հավանաբար արտացոլում են որսորդական կամ պաշտամունքային երևույթներ։

Դամբարանադաշտի վաղ բրոնզեդարյան կուլտուրական շերտի կոպիտ, ոչ հղկված, անզարդ, ջարդված կճուճի մեջ հայտնաբերվեցին երեք բռաչափ ածխացած ցորենի, գարու և հաճարի հատիկներ։ Հավանաբար սովորույթ է եղել հանգուցյալների հետ թաղել նաև հացահատիկ։ Հայտնի է, որ վաղ բրոնզեդարյան III հազարամյակի հուշարձանների հետ ածխացած հացահատիկ է հայտնաբերվել Շենգավիթում, Ադրբեջանի Քյուլ-թափայում և Վրաստանի մի շարք վայրերում, որոնք ապացուցում են, որ վաղ բրոնզի դարում Հայկական լեռնաշխարհում, ընդհանրապես Անդրկովկասում վայրի հացահատիկների կողքին մշակել, ցանել և օգտագործել են կուլտուրական հացահատիկների տեսակներ[8]։

Ջուլֆանի վաղ բրոնզեդարյան բնակատեղիից և նրան կից դամբարանադաշտից հայտնաբերված քարե աղորիքը, սանդը, սանդակոթերը, խեցեգործության նմուշները, ինչպես նաև ժամանակակից գրեթե բոլոր կենդանատեսակների ոսկորները հանգեցնում են այն եզրակացության, որ Ջուլֆանն արդեն այդ ժամանակաշրջանում անասնապահությամբ և հողագործությամբ զբաղվող, խեցեգործական բարձր արվեստ ունեցող բնակատեղի է եղել։

Ս. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ

(Մատենագիտություն, 1968)

Ստորև ներկայացվում է Սովետական Միությունից դուրս հրատարակվող հանդեսների հայագիտական հոդվածների երկրորդ ցուցակը։ Արձագանքելով արված առաջարկություններին, ես ընդգրկել եմ նաև այն հոդվածները, որոնք լույս են տեսել Revue des Etudes Arméniennes-ում (Փարիզ)։ Այս ցուցակում, սակայն, չեն ներառված այն հոդվածները, որոնք հրապարակվել են հայկական պարբերականներում՝ «Բազմավեպում», «Հանդես ամսօրյայում» և այլն։ Ինչպես նախորդ ցանկում, չեն ընդգրկված նաև Ուրարտուի պատմության և հնագիտության վերաբերյալ հոդվածները։

Դժբախտաբար հանդեսները հաճախ լույս են տեսնում մեծ հապաղումներով, որի հետևանքով և ես ձեռքի տակ չեմ ունեցել 1968 թ. բոլոր հրապարակումները։ Սակայն ավելի նպատակահարմար է լույս ընծայել ներկա ցուցակը, քան սպասել մինչև որ լույս տեսնեն բոլոր հնարավոր աղբյուրները։ Այս ցուցակին կից տալիս ենք մի հավելված, որտեղ ընդգրկված են 1966—67 թվականների մատենագիտության մեջ բացակայող հոդվածները։

* * *

Garabed Amadouni, L'autocéphalie du Katholikat arménien, in *I Patriarcati orientali nel primo millenio* (= Orientalia Christiania Analecta 181) (Rome) 1968, p. 137—178.

---

6 Ս. Հ. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 221։

7 О. А. Абибулаев, Некоторые битоги изучения холма Кюль-Тепе в Азербайджане, էջ 162, նկ. 4, 16, 17, էջ 164—165։

8 Է. Խանզադյան, նշվ. աշխ., էջ 34—39։